# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

**№ 2621/1553**

18.06.2015թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հունիսի 15-ին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Գավառի ԶՊՎ, արձանագրեց որոշ խախտումներ՝

- Մանուկ Հովհաննեսի Խզմալյանը, Գավառի բաժին բերման է ենթարկվել 20.03.2015թ-ին ժամը 17.45-ին: Ձերբակալվել է նույն օրը՝ ժամը 20.40-ին: Մ. Խզմալյանին խցից դուրս են բերել ընդհանուր իրավասության դատարան տեղափոխելու և խափանման միջոց կիրառելու համար 23.03.2015 թ-ին ժամը 18.15-ին, արդեն իսկ՝ նրա ձերբակալման առավելագույն 72 ժամը լրացած:
- Ընդհանուր գրանցամատյանները ուսումնասիրելով՝ Դիտորդական խումբը շատ մեծ կասկածանք ուներ, որ խախտվել էր Գևորգ Նայիրիի Ղարիբյանի ձերբակալման առավելագույն ժամկետը: Գ. Ղարիբյանը ձերբակալվել էր 16.01.2015թ-ին ժամը 14.10-ին և ազատ էր արձակվել 19.01.2015թ-ին ժամը 13.50-ին: Դիտորդական խմբի անդամները պատասխանատու ոստիկանից խնդրեցին տրամադրել նրա անազատության մեջ գտնվելու ժամի և րոպեի վերաբերյալ հիմնավորում, որը՝ չտրվեց:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություն:

Մուտք № 2835
22 . 06

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝

ՀՀ Ոստիկանության Քարտուղարություն
Մուտք Թիվ 4045
«22» 06 2015թ.

Համլիկ Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60
Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org
E-mail: info@policemonitoring.org

Ձեր՝ 18.06.2015թ. թիվ 2621/1553 գր.

**ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հ.Սահակյանին**

**Հարգելի տիկին Սահակյան**

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2015թ. հունիսի 15-ին ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված խախտումն ուսումնասիրվել է ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Գեղարքունիքի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Մ.Խզմալյանին ՁՊՎ-ում արգելանքի տակ պահելու օրենքով սահմանված 72 ժամից 30 րոպե ավել պահելու փաստը հիմնավորվել է, ինչի համար ոստիկանության Գավառի բաժնի հերթապահ մասի պետը, ավագ տեսուչ հերթապահը և ՁՊՎ-ի ոստիկանը ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

Գ.Ղարիբյանը ոստիկանության Գավառի բաժին բերման չի ենթարկվել: Նա ձերբակալվել է 16.01.2015թ. ժամը 14.00-ին ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության քննիչի կողմից և տեղափոխվել ոստիկանության Գավառի բաժնի ՁՊՎ: Գ.Ղարիբյանը քննիչի որոշման համաձայն ազատ է արձակվել 19.01.2015թ. ժամը 13.50-ին և արգելանքի տակ պահելու օրենքով սահմանված ժամը չի խախտվել:

**ՀՀ ոստիկանության շտաբ**